
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի պատմության Մարգպանական շրջանը բազմիցս է արծարծվել հայոց պատմությունն ուսումնասիրողների աշխատություններում, սակայն շատ հարցեր դեռ լուսաբանման կարիք ունեն: Օրինակ՝ նախարարների ինստիտուտին վերաբերող խնդիրները դեռևս կարոտ են մանրակրկիտ ուսումնասիրության:

Նախարարությունները հայ իրականության մեջ գոյատևել են բավականին երկար՝ պատմական տարբեր հատվածներում՝ ենթարկվելով ժամանակի ազդեցությանը: Նախարարների ինստիտուտի երկարակեցությունը հիմք է տալիս հարցի ուսումնասիրությունը դիտել անընդհատ շարժման ու փոփոխման համատեքստում:

Մարգպանության շրջանում նախարարների թիվը տարբերվում է Արշակունյաց ժամանակաշրջանի նախարարների թվից: Եթե Մարգպանության շրջանում, ի տարբերություն Արշակունյացի, շատ նախարարական տոհմեր¹, կախված պատմաքաղաքական դեպքերի զարգացումից, բացակայում են, ապա որոշ նախարարական տոհմեր ներկայանում են ավելի հզոր և նույնիսկ ճյուղավորված: Այդպիսի նախարարական տոհմերից են Արծրունիները, որոնք «Գահնամակում»² հանդես են գալիս նաև «Արծրունեաց երկրորդն» և «Արծրունեաց երրորդն» ճյուղերով, Մամիկոնյանները, որոնք ունեն նաև «Մամիկոնեից երկրորդն» ճյուղը, Ապահունեաց նախարարական տոհմը՝ «Այդ Ապահունի» ճյուղավորմամբ: Չորս ճյուղով է հանդես գալիս Դիմաքսյան նախարարական տոհմը՝ «Դիմաքսեան», «Բուխա Դիմաքսեան», «Այդ Դիմաքսեան», «Շիրակայ Դիմաքսեան»:

Սակայն Մարգպանության շրջանում առաջացել են նաև նոր նախարարական տոհմեր, ինչպես Կոտայքը³, որը ոչ միայն տոհմանուն է, այլև տեղանուն: Նախարարության աստիճանի բարձրացած այլ տոհմերի գոյության մասին վկայում են նաև Եղիշեի և Դազար Փարպեցու բազմաթիվ տեղեկությունները, որ պարսից արքունիքը ուրացողներից շատերին «անբաւ առատութեամբ ազարակս և աւանս շնորհէր»⁴: Նախարարական նոր տոհմերը բնակեցվում են Արշակունիների արքունի նախկին կալվածքներում, որոնց նորաբնակ տերերը դառնալու էին պարսից արքունիքի սոցիալական

¹ Տե՛ս «Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, 3-Գ:

² Տե՛ս **Ն. Արոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 280-281:

³ Տե՛ս **Ռ. Վ. Հարությունյան**, «Կոտայք» տեղանվան ծագման հարցի շուրջ, ԲԵՀ, 2005, թիվ 1, էջ 204-206:

⁴ «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին», Եր., 1957, Բ:

հենարանը Հայաստանում և նրա քաղաքականության հլու իրականացնողները տեղերում՝ ի նշան երախտագիտության:

Նախարարների թվի հարցի քննության համար շատ կարևոր են նախարարական աստիճանակարգությունը ներկայացնող «Գահնամակը» և նախարարների զինուժը պատկերող «Չորանամակը»: Սակայն քննությունը ցույց է տալիս, որ «Չորանամակը» Արշակունյաց ժամանակաշրջանն արտացոլող պատմական վավերագիր է, իսկ Մարզպանության շրջանի նախարարական աստիճանակարգությունն արտահայտող փաստաթուղթը «Գահնամակն» է, որտեղ նախարարական տների թիվը 70 է:

Քննարկվող ժամանակահատվածում նախարարական տոհմերի թվի մասին բավականին կարևոր տեղեկություններ են տալիս Եղիշեի և Ղազար Փարպեցու ներկայացրած նախարարական ցուցակները, ինչպես նաև առանձին նախարարական տոհմերի մասին հայտնած տեղեկությունները:

Այսպես, Եղիշեն հիշատակում է 27 նախարարական տոհմանուն, որոնք են Սյունեաց, Արծրունեաց, Խորխոռունեաց, Մամիկոնեից, Վահունեաց, Մոկաց, Անձևացեաց, Ապահունեաց, Ամատունեաց, Ռշտունեաց (Եղ., Բ), Վանանդացի, Կամսարական, Գնունի, Դիմաքսենից, Քաջբերունի, Ընծային, Սրվանձտեան (Եղ., Ե), Պալունեաց, Ուրծայ, Գաբեղենից, Բագրատունի, Ալեոյ (Եղ., Գ), Առավելենից, Տաշրացի, Մանդակունի, Ռափսունեան (Եղ., Է):

Թվարկվածների մեջ «Գահնամակում» բացակայում են միայն Տաշրացի, Ուրծայ և Սրվանձտեան տոհմերը:

Ղազար Փարպեցին⁵, բացառությամբ Բագրատունի և Ալեոյ տոհմանունների, հիշատակում է Եղիշեի նշած բոլոր մյուս անունները: Նա միաժամանակ տեղեկացնում է Աշոցայ, Աբեղենից, Չյունական (Փարպ., ԻԳ), Երվանդունի (Փարպ., Հ), Սահառունի (Փարպ., ՀԸ) տոհմանունների մասին, որոնք բացակայում են Եղիշեի մոտ, սակայն հիշատակվում են «Գահնամակում»: Բայց Ղազար Փարպեցու մոտ կան նաև Հովսեպեան (Փարպ., ՉԳ), Կարքայ և Աղբերակցի (Փարպ., Գ) տոհմանունների հիշատակություններ, որոնք բացակայում են և՛ Եղիշեի աշխատությունում, և՛ «Գահնամակում»:

Վերջին 3 տոհմանունները ներկայացնող անձինք Վահան Մամիկոնյանի զորաջոկատում կռվողներից էին, իսկ նրա կողմնակիցների մասին Ղազար Փարպեցին գրում է, որ նրանք չունեն ո՛չ իշխանություն, ո՛չ պատիվ, ո՛չ հարստություն և ո՛չ էլ ծառաներ (Փարպ., ՉԹ), այսինքն՝ նախարարական տոհմեր չեն ներկայացրել: Թերևս այս է վերջին 3 տոհմանունների բացակայության պատճառը և՛ «Չորանամակում», և՛ «Գահնամակում»:

Այսպիսով, ըստ եղած վավերագրերի՝ Մարզպանական Հայաստանում հիշատակվում է 73 նախարարական տուն, որից 70-ը նշվում է «Գահնամակում», իսկ մյուսները՝ Տաշրացի, Ուրծայ, Սրվանձտեան՝ Եղիշեի աշխատությունում: Ինչ վերաբերում է Ղազար Փարպեցու հիշատակած Հովսեպեան (Փարպ., ՉԳ), Կարքայ, Աղբերակցի (Փարպ., Գ) տոհմանուններին, ապա, կարծում ենք, որ նրանք դեռ չէին հասել նախարարական տան կարգավիճակի: Քանի որ, եթե նոր կազմավորված նախարարական տոհմեր լինեին

⁵ Տե՛ս «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907:

(ստեղծված լինելն ետզահնամակյան շրջանում), չէին ընդվզի պարսից արքունիքի դեմ:

«Գահնամակի» քննությունը ցույց է տալիս, որ այն նախարարական տների աստիճանակարգություն է և ոչ թե նախարարական տոհմերի ցուցակ, քանի որ որոշ նախարարական տոհմեր, ինչպես վերը նշվեց, ներկայանում են իրենց ճյուղերով:

Պետք է կարծել, որ նախարարական տոհմերն իրենց թվաքանակով տարբերվում են նախարարական տներից:

«Գահնամակում» նշվում է 59 նախարարական տոհմանուն, որոնց թվում են «կ. Քաղաքապետն արքունի», «կա. Որսապետն արքունի», որոնք հիշատակվում են ըստ պաշտոնի կամ զբաղեցրած գործակալության: Չի բացառվում, որ այս երկուսը լինեն «Գահնամակում» հիշատակված տոհմերի ճյուղերից:

Քացի այս, 59-ից 3 տոհմանուն հիշատակում է Եղիշեն՝ Տաշրացի, Ուրծայ, Սրվանձտեան, և 3-ն էլ Ղազար Փարպեցին՝ Հովսեպեան, Կարբայ, Աղբերակցի:

Ընդհանրացնելով տեսնում ենք, որ Մարգպանության շրջանի համար աղբյուրները հիշատակում են 65 տոհմանուն և 73 նախարարական տուն:

Չնայած նման եզրակացությանը՝ չի բացառվում նաև այլ նախարարական տների և տոհմերի գոյությունը Մարգպանության շրջանում, որոնց մասին չգիտենք աղբյուրների բացակայության պատճառով, իսկ Մարգպանության շրջանն ավելի տևական է եղել, քան Եղիշեի և Ղազար Փարպեցու նկարագրած ժամանակահատվածն է:

Քացի թվական տարբերությունից, Արշակունյաց ժամանակաշրջանի հետ համեմատած, մեզ հետաքրքրող պատմական ժամանակահատվածում նախարարներն ունեցել են նաև իրավական տարբերություններ: Պատճառն այն է, որ հայոց արքայատոհմի վերացումից հետո պարսից արքունիքը ոչնչացրեց նաև այն պետական ապարատը, որով կառավարվում էր երկիրը, իսկ այդտեղ իրենց նշանակալից դերն ունեին նախարարական տոհմերը:

Պատմական աղբյուրների տեղեկությունները վկայում են, որ Արշակունիների օրոք նախարարները օժտված են եղել տարբեր իրավասություններով: Նրանք եղել են բղեշխներ, կուսակալներ, կողմնակալներ, մեծամեծք, աշխարհատեր, գավառատեր, ինչպես նաև նահապետ, տանուտեր, իշխան և այլն:

Լայն տարածում ունի «իշխան» հասկացությունը, որը պատմագիտության մեջ նույնացվել է «նախարար»-ին:

Արշակունյաց շրջանում նախարարական տոհմերի ներկայացուցիչները հանդես են գալիս որպես իշխաններ⁶, իսկ իշխանների իրավասության քննությունը ցույց է տալիս, որ նրանք եղել են գործակալներ: Այս մասին է վկայում Ագաթանգեղոսի հետևյալ տեղեկությունը. «Հրաման ելեալ զօրացեալ ի թագաւորաց, զի իլեացեն, բրեսցեն իշխանքն որ իցեն յիրաքանչիւր գործակալութեան, զի շինութին աշխարհի ի դիցն բազմասցի» (Ագաթ., ԺԱ),

⁶ Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տիխիս, 1909, ԾԺԲ:

ըստ որի՝ իշխանները պաշտոնյաներ են, գործակալներ: Իսկ Արշակունյաց թագավորության օրոք պետական պաշտոնյաները, որոնք թագավորի հետ սեղան էին նստում, 900 են. «ու գործակալս անուն բարձիք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս, որք գործակալք միայն էին ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց, թող զհոտնկայս գործակալութեանն սպասու» (Բուզ., 4-Բ):

Իշխանի և նահապետի միջև տարբերություն է տեսնում նաև Փավստոս Բուզանդը, որը միմյանց դեմ կռվող նախարարներից Մանավազյան տոհմի ներկայացուցչին «իշխան» է անվանում, իսկ Որդունիներինը՝ «նահապետ» (Բուզ., 3-Գ): Հավատարիմ պաշտոնյաներ են համարվում Կորդվաց Ջոն իշխանը, Մեծ Ծովքի Մար իշխանը, Ծովքի իշխան Ներսեհը, Սյունյաց Վաղինակ իշխանը, Հաշտենից Դատ իշխանը, Բասենի Մանուկ իշխանը (տե՛ս Բուզ., 3-Թ): Իշխաններ են կոչվում նաև Տիրանի օրոք Հուսիկ կաթողիկոսին Կեսարիա ուղեկցող անձիք (տե՛ս Բուզ., 3-ՇԲ):

Նախարարների և իշխանների միջև գոյություն ունեցած տարբերության մասին է վկայում նաև Փավստոս Բուզանդի հետևյալ տեղեկությունը. Տիրանի կուրացվելուց հետո «Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօրագլուխք» (Բուզ., 3-Ի): Իսկ «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեան մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրաւարացն, այլև ի շինականաց անգամ ռամիկ մարդկանս» (Բուզ., 3-ԻԱ) տեղեկությամբ ոչ միայն տարբերություն է դրվում նախարարների և իշխանների միջև, այլև, տալով ժամանակի սոցիալական աստիճանակարգությունը, ցույց է տալիս, թե որքան ներքևում են գտնվում իշխանները:

Իշխանների մասն դիրքում գտնվելու մասին է վկայում Փավստոս Բուզանդի մեկ այլ տեղեկություն ևս. «Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրոշաց տեարք, ամենայն սատրապք, նախարարք և ազատք, պետք և իշխանք, զորավարք և սահմանապահք...» (Բուզ., 4-Գ):

Փավստոս Բուզանդի վերոնշյալ, ինչպես նաև այլ (տե՛ս Բուզ., 4-Դ) տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ իշխանները եղել են պաշտոնյաներ, և իշխան կոչվել են նաև առանձին նախարարական տոհմերի ներկայացուցիչներ, որոնք ծառայության մեջ են գտնվել հայոց արքունիքում: Վերոբերյալ տեղեկությունները վկայում են նաև Արշակունյաց Հայաստանում կուռ պետական սպարատի գոյության մասին, որի մի մասն էլ կազմել են իշխանները:

Հայոց թագավորներն իրենք էին նշանակում ոչ միայն պաշտոնյաներին, այլև տոհմերի նահապետներին, և դա կատարվում էր ըստ ավագության կարգի: Այս մասին դարձյալ վկայում է Փավստոս Բուզանդը, երբ նշում է, որ Արշակ թագավորը Վարդանին՝ ավագ եղբորը, նշանակեց Մամիկոնյան տոհմի նահապետ, միջնեկ եղբորը՝ Վասակին, սպարապետ և զորավար պատերազմական գործերում, իսկ կրտսերին՝ զորապետ (տե՛ս Բուզ., 4-Բ):

Այսինքն՝ Արշակունիների օրոք նահապետները նախարարական

տոհմերի ավագներն ու առաջնորդներն էին, բայց նրանք գործակալ չէին, այլ թագավորի կողմից հաստատվելուց հետո տնօրինում էին տոհմական կավվածքը տեղերում, որը կարող էր լինել ամբողջ գավառ կամ նույնիսկ աշխարհ:

Սակայն պետական կառավարման այս ձևը փոփոխություններ կրեց Արշակունիների անկումից հետո, երբ Արտաշիրին գահընկեց անելուց հետո պարսից Վռամ արքան նախարարներին մեծ պարզկներով ուղարկեց Հայաստան՝ մարզպան նշանակելով Վեհմիհրապուհին⁷:

Ահա այս ժամանակահատվածի մասին է, որ Եղիշեն ասում է. «Եւ իբրև գնա (Արտաշիրին - Ռ. Հ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, նախարարսն հայոց անկանէր թագաւորութիւնն» (Եղ., Ա): Այսինքն՝ թագավորության վերացումից հետո իշխանությունը տեղերում անցնում է նախարարների ձեռքը, և մեծանում է նրանց դերը ու «զի թէպետ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Եղ., Ա):

Թագավորության վերացումից հետո պարսից արքունիքը ցանկանում էր սիրաշահել նախարարներին և նրանց իր կողմը գրավել՝ երկիրը խաղաղ կառավարելու համար: Նախարարներին էր թողնվում հազարապետության, սպարապետության իրավունքը, իսկ եկեղեցուն՝ դատական գործը: Չինվորական ծառայության համար նախարարներին թոշակ էր տրվում (տե՛ս Եղ., Բ): Այս երևույթը պահպանվել է նաև արաբական տիրապետության սկզբնական շրջանում, երբ հայ նախարարներն ու նրանց հեծյալները ռոճիկ էին ստանում խալիֆայությունից⁸: Հատուկ արարողությամբ էր նշվում հայ տանուտերերի մուտքը պարսից արքունիք: Սակայն արքունիքի վարած քաղաքականությունը հայ նախարարների իրավունքների աստիճանական կրճատումն էր և Հայոց երկրի պարսկացումը: Այդ նպատակն էր հետապնդում Դենշապուհի մուտքը Հայաստան:

Եթե մինչ այդ աշխարհագիրը՝ հազարապետության գործակալությունը, վարում էին հայ նախարարները, ապա դրա իրավունքը Դենշապուհը հանձնեց մի պարսիկի (տե՛ս Եղ., Բ): Հաջորդ քայլն այն էր, որ մի մոզպետի էլ աշխարհի դատավոր կարգեց, որպեսզի նսեմացնի եկեղեցու դերը (տե՛ս Եղ., Բ):

Մարզպանության շրջանում պարսից արքունիքը վարում էր Հայաստանն իր երկրի անբաժան և չտարբերվող մի մարզ դարձնելու քաղաքականություն: Դրա համար էլ առաջադրվեց կրոնափոխության պահանջը:

Հայ նախարարները կարծում էին, թե Արշակունիների արքայատոհմի վերացմամբ իրենց իրավունքները կմեծանան, քանի որ նրանք գտնում էին, «թէ բնաւ չի իսկ ևս պիտոյ է թագաւոր, այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ և զիրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զհպատակութիւն և զանհպատակութիւն՝ ցուցցէ ձեզ» (Փարպ., ԺԴ):

Սակայն պարսից արքունիքն ուներ իր նպատակները: Նա ցանկանում էր Հայոց երկրում արմատախիլ անել թագավորության վերականգնման հնարավորությունը: Դրա համար նա Հայոց երկիրը սկսեց կառավարել ոչ թե

⁷ Տե՛ս «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», Տփլիս, 1913, Գ-ԿԳ:

⁸ Տե՛ս «Պատմութիւն Առնոյեայ», Ս. Պետերբուրգ, 1887, ԻԱ:

նախկին գործակալների, այլ նախարարների միջոցով, որոնք այժմ կոչվում էին «տանուտերեր»: Նախարարական տոհմերն էլ անվանվեցին «տներ», և որոշ նախարարական տոհմեր հզորանալով՝ բաժանվեցին մի քանի տներին⁹:

Տանուտերերը, ի տարբերություն նախկին արքունի գործակալների, տեղական կառավարիչներ էին, որոնք երկիրը ղեկավարում էին կենտրոնացված ձևով, արքունիքից: Ի տարբերություն գործակալությունների, տանուտերերի ինստիտուտի միջոցով կառավարելով երկիրը, պարսից արքունիքը մասնատում էր այն և մեծացնում իր սոցիալական հենարանը: Պարզեցնելով երկրի կառավարման ձևը՝ նա տանուտերերին անմիջական կախման մեջ էր դնում իրենից, մասնավորապես տանուտերության իրավունքը հայ նախարարներն ստանում էին պարսից արքունիքից, այն էլ՝ որոշակի ծառայության դիմաց: Այս մասին վկայում է Ղազար Փարպեցին, երբ հիշատակում է, որ պարսից Վաղարշ թագավորը տանուտերության պատիվ է շնորհում Վահան Մամիկոնյանին և Կամսարականներին, իսկ Արծրունիներին մերժում է՝ ասելով՝ թող որ այդ մարդիկ ցույց տան պարսից արքունիքին որևէ արժանավոր ծառայություն և Արյաց աշխարհի համար օգտակար որևէ վաստակ ունենան և նոր միայն կարժանանան այդ պատվին (տե՛ս Փարպ., ՂԶ):

Ժամանակի ընթացքում, երբ բացառվեց թագավորության վերականգնման հնարավորությունը Հայաստանում, պարսից արքունիքն սկսեց վարել բացահայտ պարսկացման քաղաքականություն՝ տեղ տալով պարսկամետ ուժերին: Այս քաղաքականությունը հանգեցրեց մի նոր ապստամբության, որը ղեկավարում էր Վահան Մամիկոնյանը: Այս ապստամբությունն ավարտվեց հայերի հաղթանակով: Սակայն երբ պարսից արքունիքը վերականգնեց իր ուժերը ու երկրի կառավարման լծակները նորից վերցրեց իր ձեռքը, կրկին շարունակեց վարել հայ նախարարների իրավունքների կրճատման քաղաքականություն: Սա պարսից Կավատ արքայի օրոք հայ նախարարների շրջանում տեղիք տվեց նոր դժգոհությունների և հանգեցրեց նոր ապստամբությունների¹⁰:

Քննությունը ցույց է տալիս, որ հայ նախարարների հարաբերությունները պարսից արքունիքի հետ իրականացվել են ուժի դիրքերից, որը կիրառվել է թե՛ պարսից արքունիքի, թե՛ հայ նախարարների կողմից: Հայերի համար դա հակահարված էր օտար ճնշման ծանրացմանը, քանի որ պարսից արքունիքը հետևողականորեն վարում էր ձուլման քաղաքականություն, որը կասեցվում էր միայն հայերի ընդվզումների շնորհիվ:

Ասվածի վկայությունն է այն, որ Վարդանանց պատերազմից հետո երկրի մարզպան է նշանակվում Ատրորմիզդ Արշականը, որը Հազկերտի հրամանով պետք է վարեր Հայոց երկիրը խաղաղեցնելու, քրիստոնեությունն ազատ դավանելու թույլտվության քաղաքականություն (տե՛ս Փարպ., Խ): Նույնպիսի դիրք է գրավում պարսից արքունիքը նաև Վահանանց ապստամբությունից հետո:

⁹ Տե՛ս **Ն. Արմնց**, նշվ. աշխ., էջ 280-281:

¹⁰ Տե՛ս **Н. Пигулевская**, Месопотамия на рубеже 5-6 вв. // Иешу Стилит, Хроника, М-Л., 1940, էջ 130-170:

Սակայն պետք է նշել, որ հայ նախարարները (տանուտերերը) ոչ միշտ էին համախմբված հանդես գալիս պարսից արքունիքի վարած քաղաքականության դեմ: Պարսից արքունիքն էլ իր հերթին աշխատում էր իր կողմը գրավել հայ նախարարների մի մասին՝ մյուսի դեմ օգտագործելու համար: Այդպես եղավ և՛ Վարդանանց, և՛ Վահանանց ապստամբությունների ժամանակ: Ղազար Փարպեցին բազմիցս է նշում, որ պարսկամետ ուժերը նախանձով էին վերաբերվում Վահանի՝ սպարապետ, այնուհետև մարզպան նշանակվելու իրողությանը (տե՛ս Փարպ., ԳԹ):

Ամփոփելով պետք է նշենք, որ Մարզպանության շրջանը Հայաստանում ավատատիրության զարգացման և ավատատիրական հարաբերությունների խորացման ժամանակաշրջան էր, երբ ազգային պետականության կորստին զուգահեռ մեծանում էր նախարարությունների դերն ու իշխանությունը, և դա պահպանելու համար նախարարները հետո պայքարի մեջ են մտնում պարսից արքունիքի դեմ:

Р. В. АРУТЮНЯН — *Нахарарства в Марзпанской Армении.* — В статье обсуждается вопрос о роли и места армянских нахараров в период Марзпанства. Особое внимание уделяется числу армянских нахарарских домов. В центре внимания находится также обсуждение понятия “ишхан”. Период Марзпанства принимается как время развития феодальной иерархии и феодальных отношений в Армении.